«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒԹՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ,ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԵՐԻՆ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ԱՌԱՐԿԱ ՄԱՅՐԵՆԻ

ՀԵՂԻՆԱԿ ՀԵՂԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ

ՄԱՐԶ ԱՐՄԱՎԻՐ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԵՐԻՆ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ 4

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 13

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ընթերցանությունը մայրենի լեզվի ուսուցումը ապահովում է կենդանի ու ճիշտ կառուցված խոսքի ընդօրինակումով: Իսկ դա հնարավորություն է տալիս «աստիճանաբար երեխաների մեջ լեզվական ձևերի. օրենքների ու օրինաչափությունների այնպիսի տարերային կուտակում կատարել, որոնց վրա ուսուցչի ղեկավարությամբ ու օգնությամբ կատարված վերլուծությունների ու դիտումների շնորհիվ աշակերտները պետք է հասնեն լեզվական այդ իրականությունների գիտակցմանը, լեզվի տրամաբանության ու քերականության ըմբռնմանը»:

Մանկավարժներից շատերն են կարևորել ընթերցանության դերը, կարդալու կարողությունների ձևավորումն ու զարգացումը՝ որպես ճանաչողական գիտելիքների հարստացման միջոց: Ա. Տեր-Գրիգորյանը, Ջ. Գյուլամիրյանը, Ս. Գյուլբուդաղյանը և ուրիշներ ևս «Մայրենիի» դասընթացում կարևոր դեր են հատկացրել ընթերցանության ժամերին: Ըստ Ա. Տեր-Գրիգորյանի՝ ընթերցանությունը ոչ միայն նպաստում է կապակցված խոսքի զարգացմանը, այլև ճանաչողական գիտելիքների հարստացմանն ու աշակերտների դաստիարակությանը:

Հարկ է նկատել, որ ինքնուրույն աշխատանք կատարելու հմտությունը զարգանում է անհատական և խմբային ուսումնական գործունեության բազմազան տեսակների կիրառմամբ, որոնք նրանք կատարում են տանը և դպրոցում: Այդ ընթացքում ուսուցչի հիմնական գործառույթը սովորողների ինքնուրույն ճանաչողական գործառույթների կառավարումն է:

Այսպիսով՝ մեր ուսումնասիրության թեման ինքնուրույն ընթերցանությունն է՝ որպես դպրոցականների ճանաչողական գիտելիքների հարստացման միջոց: Թեմայի ուսումնասիրության նպատակով մեր աշխատանքում առաջադրել ենք հետևյալ խնդիրները.

ա. ընթերցանության դերը մայրենի լեզվի ուսուցման գործընթացում,

բ. դասարանային ընթերցանություն և ինքնուրույն ընթերցանություն,

գ. դասարանային և ինքնուրույն ընթերցանությունների միջև կապը,

դ. ինքնուրույն ընթերցանության կազմակերպման մեթոդներն ու ձևերը

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ և ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԵՐԻՆ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Դասարանից դասարան ուսումնական ծրագրերը բարդանում են՝ ավելի բազմակողմանի

ընդգրկում ստանալով և ելնելով երեխայի կրթության ու դաստիարակության պահանջներից: Դասագիրքը երեխային միայն ընդհանուր տեղեկություն է տալիս, մնացած գիտելիքները նա պետք է ձեռք բերի ինքնուրույն կարդալու միջոցով: Այսինքն՝ դասարանային ընթերցանությունը սահմանափակ է, չի կարող ուսումնական բոլոր խնդիրներն ու նպատակներն իրագործել: Այս առումով արտադասարանային կամ ինքնուրույն ընթերցանության դերը բացառիկ է: «Երեխաներին գեղարվեստական գրականության հետ կապելու, հոգեկան հարստությունների այդ մեծ ու անսպառ շտեմարանի բանալին նրանց ձեռքը տալու ամենալավագույն միջոցը արտադասարանային ընթերցանությունն է, որի կազմակերպման ու ղեկավարման պարտականությունը դրված է հայոց լեզվի ուսուցչի վրա, չնայած գործում մեծ անելիքներ ունեն նաև երեխայի շրջապատը և նրա ծնողները»[1]:

Արտադասարանային ընթերցանության կազմակերպումը միջին դասարաններում առանձնահատուկ դժվարությունների հետ է կապված: Դրանք հիմնականում պայմանավորված են երեխաների մեջ դեպի գիրքը սեր արթնացնելու դաստիարակչական-հոգեբանական աշխատանքի և երեխաների մեջ կարդալու տեխնիկայի թույլ զարգացած լինելու խոչընդոտների հաղթահարման հետ: Հարկ է նկատել, որ ուսուցիչները արտադասարանային ընթերցանությունը դիտարկում են որպես դասարանային ընթերցանության շարունակություն և որոշակի կախման մեջ են դնում դրանից՝ թեմատիկայի ու բովանդակության տեսանկյունից այն սերտորեն կապելով ծրագրային նյութերին: Նշված հանգամանքն ունի իր դրական ու բացասական կողմերը: Ճիշտ է, այս դեպքում կտրուկ բարձրանում են ինքնուրույն ընթերցանության նպատակայնությունն ու արդյունավետությունը, քանի որ այն մեծապես նպաստում է ծրագրային նյութերի բազմակողմանի ու խոր յուրացմանը, սակայն սկզբունքորեն սահմանափակում է նաև երեխաների ինքնուրույն աշխատանքը, նրանց անհատական հետաքրքրությունների ու հակումների հետագա զարգացումը:

Ինքնուրույն ընթերցանության ժամերի կազմակերպումը կարևոր նշանակություն ու դերակատարում ունի հատկապես «Մայրենիի» դասընթացում: Ինքնուրույն ընթերցանության մեթոդիկայի ուսումնասիրումը ևս արդիական նշանակություն ունի: Ցանկացած ընթերցանություն նպատակային է և գիտակցական, եթե ընթերցանության ժամանակ աշակերտների մեջ ծագում են տարաբնույթ վարկածներ այն մասին, թե ինչ է ինքը կարդալու, ձգտում են հասկանալ, թե ինչի

[1] **Ա. Տեր-Գրիգորյան,** Արտադասարանային ընթերցանությունը տարրական դասարաններում, մեթոդական ցուցումներ, Երևան, 1973, էջ 16:

մասին է խոսքը գնալու: Ընթերցանության ընթացքում, երբ աշակերտը կարդում է, նա «իր վրա է վերցնում» կարդացածն իմաստավորելու, նրա մեջ գաղափար դնելու առաջատար դերը: Նշված գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է ինչպես աշակերտի ունեցած գիտելիքների պաշարով, այնպես էլ ուսուցչի գործոնով, նրա օգնությամբ:

Մայրենիի դասերի պարբերաբար լսումներն ու քննարկումները ցույց են տալիս, որ գեղարվեստական բնագրի ընթերցումը պետք է կազմակերպվի որոշակի մեթոդներով, որպեսզի անարդյունավետ ու ձանձրալի չլինի: Սովորաբար ընթերցանության մեթոդի բաղադրատարրեր են դառնում՝

զրույցը,
բնագրի ընթերցումը,
բառային աշխատանքը,
պատմումը,
ամփոփումը[2]:

Սովորողների ընթերցման գնահատումը պայմանավորված է ձեռք բերած որակական հատկանիշներով, որոնցով պայմանավորված է ինքնուրույն ընթերցանությունը: Այդ որակներն են՝

ճիշտ կամ անսխալ կարդալ,
հասկանալով կամ գիտակցորեն կարդալ,
վարժ կամ սահուն կարդալ
արտահայտիչ կամ գեղարվեստորեն կարդալ,
արագ կարդալ:

Բացի դրանից՝ ընթերցանության դասերը պետք է համակարգված լինեն ըստ նյութերի բնույթի և ժանրի: Դասերի ընթացքում անհրաժեշտ է սովորողների նախապատրաստել նոր նյութի ընկալմանը: Տեքստի շուրջ աշխատանքը պետք է կազմակերպել այնպես, որ բոլոր սովորողները պատկերացնեն, գիտակցեն ներկայացված իրադարձությունները, հասկանան դրանց բովանդակությունը, գեղարվեստական միջոցները և ստեղծագործության հիմնական իմաստը: Սրանով էլ պայմանավորված է դասի հիմնական փուլերի առանձնացումը, որոնց թվում են՝ նախապատրաստումն ընթերցանությանը, ստեղծագործության առաջին ընթերցումը, տեքստի շուրջ

[2]**Ջ. Գյուլամիրյան,** Տարրական դասարաններում արտադասարանական ընթերցանության կազմակերպման խնդիրները և մեթոդները, «Նախաշավիղ», 2001, N1, էջ 22:

աշխատանքը, պատկերացումների ամրապնդումն ու ընթերցած տեքստի հիմնական իմաստի ընկալումը[3]:

Մեթոդիկայում մշակված են մի շարք հնարներ, որոնք նպաստում են ընթերցած ստեղծագործությունը խորությամբ ըմբռնելուն.

ա. Դիտարկել և մեկնաբանել ստեղծագործության վերնագիրը,

բ. Առանձնացնել հենակետային (բանալի) բառերն ու արտահայտությունները,

գ. Վերլուծել բնագիրն ու պարզաբանել հիմնական գաղափարը, ենթատեքստը և այլն[4]:

Հատկապես կարևորվում է նոր նյութի ընթերցանության նախապատրաստումը դասին: Դրա բնույթը որոշվում է դասի նպատակներով, ստեղծագործության բովանդակությամբ, թեմայի շուրջ երեխայի ունեցած գիտելիքների առկայությամբ: Ընթերցանության ճիշտ կազմակերպված մուտքը նպաստում է, որ սովորողները առաջադրվող թեմայի նկատմամբ դրսևորեն հետաքրքրություն և որոշեն ընթերցման նպատակը: Նշված երկու գործոնները՝ հետաքրքրությունն ու նպատակը, կարևոր են սովորողների ակտիվության տեսանկյունից: Ուսումնական գործունեության արդյունավետությունը պայմանավորված է նաև սովորողների նպատակներով: Արդյունավետությունը ցածր է, եթե աշակերտները չեն դրսևորում թեմայի նկատմամբ կայուն հետաքրքրություն:

Նախնական առաջադրանքները ևս կարևոր դեր ունեն ինքնուրույն ընկալման գործում: Հատկապես արդյունավետ են այն հարցադրումները, որոնց պատասխանելիս պետք է հիշել նախորդ դասարաններում ուսումնասիրած նյութերը: Օրինակ՝ Դ. Գյուրջինյանի և մյուսների «Մայրենի 5» դասագրքում զետեղված Գ. Էմինի «Մեր այբուբենը» դասանյութի ընթերցումից առաջ կարելի է առաջադրել՝ դասի վերջում աշակերտները պատմեն, թե ինչ գիտեն Մեսրեպ Մաշտոցի մասին: Այս դեպքում ճանաչողական գիտելիքների ընդլայնումը կատարվում է անմիջականորեն նոր նյութի ընկալման հիմքով, ակտիվացնում է սովորողներին, նրանց անմիջապես ներքաշում է տեքստի ընթերցման գործընթաց, ենթագիտակցական շերտում եղած պատկերացումները բերում է գիտակցական շերտ՝ զուգորդային կապեր ստեղծելով սովորողների նախնական գիտելիքների և նոր նյութի միջև: Այսինքն՝ նախքան ընթերցումն առաջադրանքների առաջադրումը սովորողներին

---

[3]**Ա. Տեր-Գրիգորյան,** Ընթերցանության մեթոդիկա, Երևան, 1978:

[4]**Ջ. Գյուլամիրյան,** Տարրական դասարաններում արտադասարանական ընթերցանության կազմակերպման խնդիրները և մեթոդները, «Նախաշավիղ», 2001, N1, էջ 22:

հնարավորություն է ընձեռում սեփական բառերով վերարտադրելու նյութը, դրա հիման վրա զարգանում են տեքստի ինքնուրույն ընկալման կարողությունները, տրամաբանական մտածողությունն ու ճանաչողական ունակությունները:

Անհրաժեշտ է նաև, որ աշակերտները կարողանան ընթերցված նյութերից փաստեր ու տեղեկություններ քաղել և ապացուցելով դրանք՝ զարգացնեն ընդհանրացումներ և համադրումներ անելու կարողությունները: Օրինակ՝ «Հայոց հրաշքը՝ Մեսրոպ Մաշտոց» ընթերցելիս աշակերտներին հարց է տրվում՝ ինչու մաշտոցը ստեղծեց հայոց գրերը: Նման հարցադրումների պատասխանելիս աշակերտները հարկադրված են լինում մեկ անգամ ևս ինքնուրույն ընթերցելու դասանյութը կամ դասի համապատասխան հատվածը: Իսկ դա նպաստում է տվյալ թեմայի շրջանակներում ինքնուրույն կողմնորոշվելու զարգացմանը:

Միջին տարիքի դպրոցականին սովորեցնել պարզ և հստակ շարադրել մտքերը, համապատասխան բառերով արտահայտել իր պատկերացումները.բավականին դժվար գործընթաց է և ուսուցչից մեծ ջանքեր է պահանջում: Այս դեպքում կարևորվում են մեթոդական կառույցում ընդգրկված քայլերը, որոնք ուղղված են ճանաչողական գիտելիքների ամրապնդմանն ու ինքնուրույն մտածողության զարգացմանը:

Այսպիսով՝ ինքնուրույն ընթերցանությունը սովորողների ինքնուրույն ուսումնական գործունեության կազմակերպման ձևերից է, որը նպաստում է.

ինքնուրույն և ստեղծագործական գործնական կարողությունների զարգացմանը,

վերլուծական հմտությունների դրսևորմանը,

ստեղծագործական դաստիարակչական կողմի ընկալմանը,

կրթության զարգացանը և այլն :

Նշենք՝ անձի զարգացման, նրա արժեքային համակարգի, մտածողության ձևավորման գործում մեծ դեր է կատարում ընթերցանությունը: Գեղարվեստական ստեղծագործությունների հերոսների արարքների, դատողությունների վերլուծությունը, պատմումը դպրոցականների մեջ որոշակի արժեքների ստեղծման կարևոր ազդակ է դառնում: Ինքնուրույն ընթերցանության միջոցով զարգանում են աշակերտների երևակայությունը, հոգեկան ներաշխարհը, խոսքը, ընդլայնվում է ճանաչողական ունակությունների շրջանակը: Հենց դա է պատճառը, որ մանկավարժներն ամեն ջանք գործադրում են ընթերցողական կարողությունների մշակման, ընթերցասիրության դաստիարակության համար:

Ընթերցած ստեղծագործության մեջ կերտված կերպարների գործունեությունը, նրանց զգացմունքային ապրումները սերտորեն առնչվում են ինչպես աշակերտի ինքնարտահայտման, այնպես էլ ուսումնական-ստեղծագործական գործունեության հիմքերին:

Ինքնուրույն ընթերցանությունը դառնում է ակտիվ գործընթաց, երբ աշակերտը մտորում է կարդացածի բովանդակության մասին: Ընթերցելիս աշակերտի միտքը դեգերում է շրջապատի տպավորությունների դաշտում, և արդյունքում չի ընկալվում կարդացածի իմաստը: Ընդ որում, առկա են ապակենտրոնացման բազում պատճառներ: Դրանցից են՝

• անուշադրությունը,

• ընթերցվող նյութի անհետաքրքիր կամ անհասկանալի լինելը,

• աշակերտի անձնական առանձնահատկությունները,

• միջավայրը և այլն:

Չափազանց կարևոր է ընթերցվող նյութի ճիշտ ընտրությունը: Այն պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին: Այդկերպ ընթերցանությունը հիմք կհանդիսանա կայուն գիտելիքների հաղորդման, դասի նպատակին համապատասխան կարողությունների և հմտությունների մշակման համար: Կարևոր են նաև դիպուկ, նպատակային հարցադրումները, որոնք կենտրոնացնում են աշակերտների ուշադրությունը և խթանում մտածողությունը: Միաժամանակ նրանց համար հնարավորություն է ստեղծվում բացատրելու իրենց գաղափարները, արտահայտելու կարծիքներ, ներկայացնելու նաև չիմացածը:

Օգտագործելով տարաբնույթ հնարներ, մեթոդներ ու ակտիվ վարժություններ՝

ուսուցիչների խնդիրն է նույնիսկ ինքնուրույն ընթերցանության ժամերին ձևավորել այնպիսի ընթերցողներ, որոնք կարողանան կարդալու ընթացքում ձեռք բերած գիտելիքները իմաստավորել, օգտագործել, զարգացնել ակտիվ և խոհուն ընթերցող լինելու կարողություն: Հարկավոր է սովորեցնել նաև կարդալ՝ սոսկ բավականություն ստանալու համար: Պետք է հասնել այն բանին, որ պարզունակ մտապահման փոխարեն աշակերտները տեքստը ենթարկեն քննության և կատարեն բազմաբնույթ առաջադրանքներ:

Դասի պլան

Վահան Տերյանի «Տխրություն» բանաստեղծության ուսուցում Վահան Տերյանի բանաստեղծությունների **ուսուցման նպատակներն են՝**

ա/ գեղեցիկ և արտահայտիչ արտասանությունը բ/ պատկերավոր մտածելակերպի դրսևորումը

գ/ երևակայության և ինքնուրույն ստեղծագործելու խթանում դ/ բառապաշարի հարստացում և կիրառում ե/ գրողի աշխարհայացքի ընկալում և մեկնաբանություն

զ/ սեփական ներաշխարհի հույզերի և զգացմունքների բացահայտում

Ուսումնական գործունեությունը կազմակերպվում է՝ հաշվի առնելով այս նպատակները:

Խթանման փուլ - ի՞նչ գիտեն Վահան Տերյանի մասին Որևէ բանաստեղծություն կարո՞ղ են արտասանել

Ինչու՞են հենց այդ բանաստեղծությունն ընտրել Ի՞նչ պատկերներ են դուր եկել

Խթանման փուլում տրամադրություններ են ստեղծվում տերյանական աշխարհի շուրջ:

/իրականացվում է սեփական ներաշխարհի և գրական ճաշակի բացահայտում/

Ընկալման փուլ –

<u>Քայլ 1</u>

Երեխաները տեղեկություններ են հաղորդում Վ. Տերյանի մասին, ուսուցչի ուղղորդող հարցերի օգնությամբ ամբողջանում է Տերյան մարդու, բանաստեղծի և հայրենասերի կերպարը՝

1/ ի՞նչը հատկապես տպավորվեց երեխաների մեջ

2/ ի՞նչ գիտեին և ի՞նչ նոր բան իմացան Տերյանի մասին և այլն: /գրողի աշխարհայացքի ընկալում և մեկնաբանություն/

<u>Քայլ 2</u>

Երեխաների արտասանած բանաստեղծություններից դուրս գրել այն տողերը, որոնք շատ են դուր եկել, գրել գրատախտակին, որոշել՝ պատկերավորման ինչ միջոցներ է կիրառել Տերյանը:

/Բառապաշարի հարստացում և կիրառում/

<u>Քայլ 3</u>

Այնուհետև անդրադառնալ /սաներից մեկը ինքն այդ հարցը տվեց/ Տերյանի ասույթներից մեկին.**§Թախծում եմ ճիշտ է, բայց այնպես լուսավոր…**ի: Երեխաների միտքը խթանելու համար առաջարկում եք շարունակել հետևյալ նախադասությունը.

Թախծում եմ, երբ…, եթե…, որովհետև…, թեև…, բայց…,

Հետաքրքիր մտքեր են ծնվում:

Օրինակ՝ Թախծում եմ, երբ նա հեռու է: Թախծում եմ, թեև տխուր չեմ: Թախծում եմ, որովհետև լսում եմ ջութակի քնքուշ մեղեդին:

/Պատկերավոր մտածելակերպի դրսևորում և զարգացում, ինքնուրույն ստեղծագործելու կարողություն/

<u>Քայլ 4</u>

Այս մտքերի ունկնդրումից հետո փորձում են մեկնաբանել Տերյանի **լուսավոր թախիծ** պարադոքսը. Գրատախտակին գրում եք այդ արտահայտությունը, և սկսվում է մտքերի տարափը: Շատ հետաքրքիր մեկնաբանություններ են ստացվում:

Օրինակ՝ **լուսավոր թախիծ** – հույս, արև, հուշեր, կարոտ, սպասում, վերադարձ, կորուստ, հավատ, սեր…

Այսպիսով, երեխաները իրենք են զգում և հասկանում այս խորհրդավոր արտահայտության ողջ գեղեցկությունն ու իմաստությունը:

- երևակայության և ինքնուրույն ստեղծագործելու խթանում/
- սեփական ներաշխարհի հույզերի և զգացմունքների բացահայտում/

<u>Քայլ 5</u>

Այնուհետև գրատախտակին գրվում է **տխրություն** բառը և երեխաներին առաջարկվում՝ իրենց պատկերացումով ինչ գույն, ինչ ձև և ձայն ունի տխրությունը: Ստացվում է **տխրության** խորհրդանիշը՝ ըստ սաների: Օրինակ՝ **գույն-** սև, մութ, մոխրագույն, սպիտակ, **ձև** - մշուշ, հեռացող մարդու կերպարանք, կանացի աննշմար դեմք, **ձայն** – հեռավոր արձագանք, տխուր հառաչանք, անձրևի կաթիլների թակոց:

Այս ամենից հետո սաները պատրաստ են ընկալելու Տերյանի §Տխրությունի բանաստեղծությունը:

/ երևակայության և ինքնուրույն ստեղծագործելու խթանում/

Քայլ 6

Նախ ուսուցիչը պատմում է §Մթնշաղի անուրջներ¦ ժողովածուի ընդհանուր տրամադրությունների և թեմաների մասին, որ այն տպագրվել է 1908թ-ին և սկսվում է §Տխրություն¦ բանաստեղծությամբ: Ապա գեղեցիկ արտասանում է բանաստեղծությունը, այնուհետև կարող է առաջարկել քառաբաժանի մեթոդը /ի՞նչ տեսա, լսեցի, զգացի, հասկացա/ կամ ուղղակի համեմատել Տերյանի պատկերած տխրությունը սաների ներկայացրած պատկերների հետ: Հետաքրքիրն այն է, որ դրանք գրեթե նույնն են:

Ուսուցիչը ցույց է տալիս կամ սաների հետ միասին եզրակացնում են, թե որքան ճշմարտացի և բնորոշ են Տերյանի պատկերած զգացմունքները և որքան հոգեհարազատ յուրաքանչյուր մարդու:

Այնուհետև սկսել բանաստեղծության պատկերային և գաղափարական վերլուծությունը, այսինքն՝ աշխատանք բնագրով: Կարելի է բաժանել խմբերի և այդպես աշխատել կամ անհատական:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ինքնուրույն ընթերցանության դասաժամերը ցույց են տալիս, որ արտադասարանական ընթերցանության ճիշտ կազմակերպումն ու դասարանային ընթերցանության ժամանակ համապատասխան մեթոդների գործադրումը ոչ միայն հետաքրքրություն է առաջացնում ընթերցանության նկատմամբ, ձևավորում է կրտսեր դպրոցականի արժեհամակարգը ու խոսքը, այլև նպաստում է աշակերտների ճանաչողական գիտելիքների հարստացմանը, կարևոր դերակատարում ունենում աշակերտների մտածողության, տրամաբանության զարգացման գործում:

Աշակերտների հարցումից ստացվող տվյալների վերլուծությամբ պարզ է դառնում, որ՝ա) ընթերցանությունը որոշ չափով նվազեցնում է համացանցի ունեցած վնասակար ազդեցությունը, բ) աշակերտներին ընթերցանության ժամանակ գրավում են նաև գրքի ձևն ու չափը, նկարազարդումները, պատկերները, որոնք հետաքրքրություն են առաջացնում ընթերցանության նկատմամբ:

ՈՒսուցիչների վերլուծությունից պարզ է դառնում, որ ինքնուրույն ընթերցանության դասաժամերի անցկացումը կարևոր նշանակություն ունի: Այս առումով ուսուցիչները նշանակություն են տալիս բնագրերի ընտրությանը և դասարանային ու արտադասարանային ընթերցանության կապին: Այս դեպքում ինքնուրույն ընթերցանությունը հաճախ վերածվում է հաճելի զբաղմունքի:

Այսպիսով՝ մեր հետազոտությունը թույլ տվեց գալու հետևյալ եզրակացությունների.

1. Մայրենիի դասընթացում կարևորագույն դեր է կատարում ինքնուրույն ընթերցանության բաղադրիչը. այն ունի սովորողի ընթերցողական կարողությունները զարգացնելու և ընթերցասիրություն ձևավորելու կարևոր նշանակություն:

2. Ինքնուրույն ընթերցանությունը մեծապես նպաստում է սովորողի ճանաչողական գիտելիքների հարստացման և արժեհամակարգի ձևավորման գործընթացին, ուստի ինքնուրույն ընթերցանության համար նախատեսված ստեղծագործությունների վերլուծությունն ու քննարկումը պետք է կազմակերպվի նաև այդ նպատակի առավելագույն արդյունավետ իրականացման հաշվառմամբ:

3. Ճանաչողական գիտելիքների հարստացման արդյունավետ կազմակերպման համար

կարևոր է ինքնուրույն և դասարանային ընթերցանությունների միջև կապի ստեղծումը. եթե ինքնուրույն ընթերցանության համար հանձնարարվող գրականությունն իր ճանաչողական կամ դաստիարակչական բովանդակությամբ անմիջականորեն առնչվում է արդեն ուսումնասիրված կամ զուգահեռ ուսումնասիրվող թեմաների հետ, լրացնում է դրանք, ապա լրացուցիչ հնարավորություն է ընձեռնվում ուսուցչին՝ առավել ընդգրկուն և խորը դարձնելու քննության առնված հարցերի ուսուցման գործընթացը:

4. Ինքնուրույն ընթերցանությունը նպաստում է նաև աշակերտի բառապաշարի հարստացմանն ու կապակցված խոսք կառուցելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Աբովյան Խ.,** Երկերի լիակատար ժողովածու, հ.5, Երևան, 1950:
2. **Աղայան Ղ.**, Երկեր, հ.4, Երևան, 1940:
3. **Ավագյան Լ.**, Ինքնուրույն ընթերցանությունը որպես կրտսեր դպրոցականի մտածողության զարգացման միջոց, «Մանկավարժության զարգացման հիմնախնդիրները» տարածաշրջանային միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2015:
4. **Գալստյան Ա., Բալայան Ա. և ուրիշներ**, Ինքնուրույն ընթերցանության ձեռնարկների մեթոդական կառույցը՝ որպես սովորողների հասկանալով կարդալու կարողության ձևավորման միջոց, Տարրական դպրոցի զարգացման հեռանկարները 21-րդ դարում, Երևան, 2014:
5. **Գալստյան Ա., Խարազյան Ռ. և ուրիշներ**, Ինքնուրույն ընթերցանություն 2-րդ, 3-րդ, 4-րդ դասարանների համար, Էդիթ Պրինտ, Երևան, 2010:
6. **Գյուլամիրյան Ջ.**, Խաղալով սովորենք, Զանգակ 97, Երևան, 2009:
7. **Գյուլամիրյան Ջ.,** Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, Երևան, 1998:
8. **Գյուլամիրյան Ջ.,** Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2006:
9. **Գյուլամիրյան Ջ.,** <<Մայրենի լեզու>> դասագրքի մեթոդական ուղեցույց, երևան, 2004:
10. **Գյուլամիրյան Ջ.,** Տարրական դասարաններում արտադասարանական ընթերցանության կազմակերպման խնդիրները և մեթոդները, <<Նախաշավիղ>>, 2001, N 1:
11. **Թադևոսյան Թ.,** Ինքնուրույն ընթերցանությունը՝ կարդալու կարողությունների ձևավորման և զարգացման արդյունավետ միջոց, «Նախաշավիղ», 6. 2015:
12. **Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ.**, Ընթերցանության դասաժամերի դերն ինքնուրույն գործունեության կազմակերպման և մտածողության զարգացման գործում// «Նախաշավիղ», 2006, N6: